«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ I ԵՎ II ՀԱՐԿԵՐԻ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 02/01

«ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-1/19»

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳՁԲ)02/01 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«12» «մարտ» 2019թ.
«__» _____ 20__ թ

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Մովսես Վարդանյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Աննա Սարգսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀԱԷԿ» ՓԲԸ սանիտարա-կենցաղային մասնաշենքի I և II հարկերի ցնցուղարանների վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2019թ. սեպտեմբերի 30-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 **Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ ԱԱԾ կողմից ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման պատասխանների արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:**

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N1 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 **Աշխատանքները սկսելուց 40 օր առաջ՝ մուտքի անցագրեր ստանալու նպատակով, Պատվիրատուին ներկայացնել այն աշխատակիցների տվյալները ովքեր ընդգրկված են այդ աշխատանքներում: ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008 որոշմամբ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն համարվում է կարևորագույն օբյեկտ, և ընկերության հարակից տարածք մուտք գործելը իրականացվում է հսկիչ-անցագրային կետով:**

3.4.13 **Աշխատանքները սկսելուց առաջ ներկայացնել տեղեկանք, որ սույն պայմանագրով կատարվող աշխատանքներում ներգրավված աշխատակիցներն իրավունք ունեն աշխատելու հսկման գոտում (контролируемая зона)՝ չունեն բժշկական հակացուցումներ և դոզիմետրյան սահմանափակումներ (Инструкция по радиационной безопасности ААЭС рк.ЭТД.12.ОРБ-001 пункт 10,1):**

3.4.14 Պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:

3.4.15 **Աշխատանքի ավարտին ներկայացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ–ում գործող (Акт о ремонте оборудования выполненного сторонними организациями, Бланк исполнительных документов ТОиР по Акту о ремонте (УД. АТД.09.ОПР.001 ут. 10.02.15г. пр. №534 от 23.08.13г.)) փաստաթղթերը:**

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 26898000 (քսանվեց միլիոն ութ հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ, որից ԱԱՀ - 4483000 (չորս միլիոն չորս հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները

Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 Հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,	Արարատի մարզ, գ.Շահումյան, Պ, Սևակի 7
Հ/Հ 1930000199200100	Հ/Հ 220013333657000
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ,
ՀՎՀՀ 04401874,	ՀՎՀՀ 04225743,
Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,	Հեռ.՝ 093-000-204
Հեռ.՝ 20-04-91, 33-40	E-mail: artplas@inbox.ru
E-mail: anpp@anpp.am	
Մ. Վարդանյան	Ա. Սարգսյան

Հավելված թիվ 1
«12» «03» 2019թ. կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-1/19» ծածկագրով
N 02/01 պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀԱԷԿ» ՓԲԸ ՍԱՆԻՏԱՐԱ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ I ԵՎ II ՀԱՐԿԵՐԻ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀԱԷԿ-ի ՍԱՆԻՏԱՐԱ-ԼԱԲՈՐԱՏՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

հմ	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի ընդհ.արժեքը /հազ.դրմ/	Ընդհ.արժեքը /հազ.դրմ/
1	2	3	4.0	5	6
	ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
	ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿ				
	1.Քանդման աշխատանքներ				
1	Մետաղապլաստե դռների քանդում քանդում	մ²	3.8	1.19	4.51
2	Մետաղապլաստե բաժանարար միջնորմների քանդում h=2.1 մ	մ²	15.0	0.30	4.47
3	Ց/ավազե հարթաշերտի քանդում խեցեղեն հատակների տակ 100մմ հաստ.	մ²	36.1	0.37	13.40
4	Խեցեղեն հատակների քանդում	մ²	36.1	0.43	15.49
5	Մետաղաձողերից հին ներկի վերցում	մ²	36.1	0.27	9.77
6	Պատերից հաղճասայի քանդում	մ²	128.0	0.58	74.23
7	Պատերից ցնավազե սվաղի քանդում	մ²	128.0	0.18	23.00
8	Շինաղբի բարձում և տեղափոխում 13 կմ հեռավոր	տ	20.0	3.19	63.81
	2.Վերանորոգման աշխատանքներ				
	Բացվածքներ				
1	Մետաղապլաստե դուռ, ապիտակ, բլոկ 60մմ հաստությամբ, 4+4մմ, /հայկական պրոֆիլ/	մ²	15.1	35.91	542.09
	Հատակներ				
1	Ց/ավազե հարթաշերտի իրականացում 70մմ հաստ.	մ²	36.1	3.03	109.46
2	Գրամեխուսացում իզոգամով 2 շերտ	մ²	36.1	4.93	177.82
3	Ց/ավազե հարթաշերտի իրականացում 30մմ հաստ.	մ²	36.1	1.35	48.79
4	Կերամիկական սալիկներով հատակների իրականացում	մ²	36.1	7.50	270.71

5	Կերամիկական սալերով շրիշակների իրականացում h=100մմ	գծմ	32.0	0.97	30.93
	Հարդարման աշխատանքներ				
1	Ցնցուղարանի նախասրահի պատերի սվաղի իրականացում ց/ավազե շաղախով h=2.75մ	$մ^2$	34.5	1.68	57.90
2	ՑՆցուղարանի պատերի սվաղի իրականացում ց/ավազե շաղախով h=3.5մ	$մ^2$	93.5	1.68	156.92
3	Ցնցուղարանի նախասրահի պատերի երեսպատում հաղճասալով h=2.75մ	$մ^2$	34.5	10.97	378.60
4	Ցնցուղարանի պատերի երեսպատում հաղճասալով h=3.5մ	$մ^2$	93.5	10.97	1026.07
5	Կախովի առաստաղի իրականացում պլաստմասե, սպիտակ	$մ^2$	128.0	4.98	638.02
6	Շեպերի բարձրորակ գաջի սվաղի իրականացում	$մ^2$	2.0	5.04	10.09
7	Քրոմապատ չժանգոտվող պողպատից խողովակներ d=50x1մմ ցնցուղարանների մետաղապլաստե միջնորմների ամրացման համար	գծմ	15.0	6.83	102.50
8	Մետաղապլաստե միջնորմների իրականացում h=2.1մ ցնցուղարաններում:	$մ^2$	34.0	18.93	643.51
	ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿ				
	1.Քանդման աշխատանքներ				
1	Փայտե պատուհանների քանդում	$մ^2$	2.8	2.00	5.61
2	Մետաղապլաստե դռների քանդում քանդում	$մ^2$	18.9	1.19	22.55
3	Մետաղապլաստե բաժանարար միջնորմների քանդում h=2.1մ	$մ^2$	82.0	0.30	24.46
4	Ց/ավազե հարթաշերտի քանդում խեցեսալե հատակների տակ 100մմ հաստ.	$մ^2$	230.0	0.37	85.39
5	Խեցեսալե հատակների քանդում	$մ^2$	230.0	0.43	98.68
6	Առաստաղներից հին ներկի մաքրում	$մ^2$	230.0	0.27	62.24
7	Պատերից հաղճասալի քանդում	$մ^2$	446.0	0.58	258.64
8	Պատերից ց/ավազե սվաղի քանդում	$մ^2$	446.0	0.18	80.13
9	Շինաղբի բարձում և տեղափոխում 13 կմ հեռ.վրա	տ	75.0	3.19	239.30
	2.Վերանորոգման աշխատանքներ				

	Բացվածքներ				
1	Մետաղապլաստե դուռ, սպիտակ, բլոկ 60մմ հաստությամբ, 4+4մմ, /հայկական պրոֆիլ/	$մ^2$	18.9	35.91	678.73
2	Մետաղապլաստե պատուհան 60մմ 4+4մմ ապակեփափեթով, սպիտակ, չբացվող/հայկական պրոֆիլ/	$մ^2$	2.8	18.93	52.99
	Հատակներ				
1	Ց/ավազե հարթաշերտի իրականացում 70սմ հաստ.	$մ^2$	230.0	2.85	654.58
2	Ջրամեկուսացում իզոգամով 2 շերտ	$մ^2$	230.0	4.93	1132.95
3	Ց/ավազե հարթաշերտի իրականացում 30սմ հաստ.	$մ^2$	230.0	1.27	292.26
4	Կերամիկական սալիկներով հատակների իրականացում	$մ^2$	230.0	7.50	1724.71
5	Կերամիկական սալերով շրիշակների իրականացում h=100մմ	գծմ	135.0	0.97	130.50
	Հարդարման աշխատանքներ				
1	Բացվածքի փոքրացում 200մմ հաստ. թեթև բլոկներով	$մ^3$	0.8	27.90	22.32
2	Ամրանավորում Φ8 Ac	տ	0.01	535.05	5.35
3	Φ10մմ անցքերի բացում ե/բ տարրերում	հատ	12.0	0.75	8.99
4	Սանհանգույցի պատերի սվաղի իրականացում ց/ավազե շաղախով h=2.75մ	$մ^2$	390.0	1.68	654.52
5	Սանհանգույցի պատերի երեսպատում հաղճասալով h=2.75մ	$մ^2$	390.0	10.97	4279.88
6	Կախովի առաստաղի իրականացում պլաստմասե, սպիտակ	$մ^2$	230.0	4.98	1146.43
7	Շեպերի բարձրորակ գաջի սվաղի իրականացում	$մ^2$	8.0	5.04	40.10
8	Քրոմապատ չժանգոտվող պողպատից խողովակներ d=50x1մմ ցնցուղարանների մետաղապլաստե միջնորմների ամրացման համար	գծմ	85.2	6.83	582.22
9	Մետաղապլաստե միջնորմների իրականացում /h=2.1մ/ ցնցուղարաններում:	$մ^2$	120.0	18.93	2271.19
	Այլ աշխատանքներ				
1	Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում և վերամոնտաժում փորձարկումով	հատ	3.0	0.58	1.75

2	ջեռուցման խողովակների ապամոնտաժում և վերամոնտաժում փորձարկումով	գծմ	20.0	0.12	2.33
3	Սակառ՝ ջեռուցման խողովակների համար 10*6սմ	գծմ	20.0	0.73	14.51

էլեկտրատեխնիկական մաս

1	Պղնձե հաղորդալարի մոնտաժում ՎՎԳ 3*6 մմ^2	գծմ	72.0	1.21	86.79
2	Մալուխ պղնձե բազմաջիղ ВВГ 3x4 մմ^2	գծմ	12.0	1.05	12.62
3	Մալուխ պղնձե բազմաջիղ ВВГ 3x2.5 մմ^2	գծմ	135.0	0.94	126.41
4	Մալուխ պղնձե բազմաջիղ ВВГ 3x2.5 մմ^2	գծմ	237.0	0.60	142.21
5	Ավտոմատ անջատիչների արկղ պլաստմասե, պատի մեջ տեղադրվող 12մոդուլ	հատ	1.0	10.62	10.62
6	Ավտոմատ անջատիչ (եռաբևեռ) C 100 Ա, 10kA	հատ	1.0	13.77	13.77
7	Ավտոմատ անջատիչ (եռաբևեռ) C 63 Ա, 10kA	հատ	3.0	12.45	37.35
8	Ավտոմատ անջատիչ (միաբևեռ) C 50 Ա, 6kA	հատ	1.0	5.85	5.85
9	Ավտոմատ անջատիչ (միաբևեռ) C 32 Ա, 6kA	հատ	1.0	3.48	3.48
10	Վարդակ հողանցման հպակով, փակ տեղադրման, 1 տեղանի 16 Ա. 230Վ	հատ	3.0	1.73	5.19
11	Վարդակ հողանցման հպակով, փակ տեղադրման, 2 տեղանի 16 Ա. 230Վ	հատ	10.0	1.96	19.56
12	Անջատիչ 2 սեղմակով փակ տեղակայման շրջանակով 10Ա 230	հատ	7.0	1.90	13.27
13	Անջատիչ 1 սեղմակով փակ տեղակայման շրջանակով 10Ա 230	հատ	3.0	1.32	3.96
14	LED 20W 190x190 4000k լուսատուների մոնտաժում:	հատ	41.0	20.61	844.88
15	Մոնտաժային տուփեր	հատ	8.0	0.83	6.63
16	Ամրակներ 10մմք. 12մմք	տուփ	10.0	1.32	13.19
17	Գոֆրե մալուխի 10մմ	գծմ	237.0	0.09	20.84
18	Գոֆրե մալուխի 20մմ	գծմ	219.0	0.11	24.07
19	Ակոսի փորում	գծմ	456.0	0.34	152.85
20	Ակոսի փակում	մ^2	10.0	1.36	13.57

Ջրամատակարարման ներքին ցանց

	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Դողպատե խողովակների ապամոնտաժում Ф76	գծմ	10.0	0.65	6.54

2	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ50	գծմ	135.0	0.33	44.27
3	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ15	գծմ	45.0	0.33	14.76
4	Փականի պամոնտաժում 76մմ	հատ	1.0	0.80	0.80
5	Փականի պամոնտաժում 50մմ	հատ	3.0	0.47	1.40
6	Փականի պամոնտաժում 15մմ	հատ	14.0	0.29	4.08
7	Ցնցուղի ծորակների ապամոնտաժում	հատ	41.0	0.47	19.10
8	Լվացարանի ծորակների ապամոնտաժում	հատ	1.0	0.29	0.29
9	Անջատում գործող ջրագծից 76x76	տեղ	2.0	1.16	2.33
10	Անջատում գործող ջրագծից 50x50	տեղ	32.0	0.59	19.01
11	Շինաղբի բարձում և տեղափոխում 13 կմ հեռ.վրա	տ	0.5	3.19	1.60
	Մոնտաժման աշխատանքներ				
1	Անցքերի բացում պատերում Φ200	հատ	4.0	2.69	10.75
2	Անցքերի բացում ծածկի սալերում Φ100	հատ	6.0	3.73	22.40
3	Պոլիվինիլքլորիդե խողովակների de76x7 մոնտաժում /արտաքին ցանց/	գծմ	5.0	3.55	17.75
4	Պոլիվինիլքլորիդե խողովակների de50x5.5 մոնտաժում /արտաքին ցանց/	գծմ	10.0	3.55	35.49
5	Պոլիպրոպիլենային տաք ջրի խողովակների մոնտաժում Φ76*7.0	գծմ	22.0	7.10	156.21
6	Պոլիպրոպիլենային տաք ջրի խողովակների մոնտաժում Φ50*5.5	գծմ	170.0	5.97	1015.59
7	Պոլիպրոպիլենային տաք ջրի խողովակների մոնտաժում Φ15	գծմ	130.0	2.43	315.93
8	Մետաղապլաստե խողովակների ձևավոր մասերի արժեքը	հատ	30.0	1.06	31.65
9	Ծունկ 76	հատ	4.0	1.12	4.48
10	Ծունկ 50	հատ	26.0	0.54	13.99
11	Կցաշուրթ DN50մմ ներդիրով	հատ	2.0	4.71	9.42
12	Կցաշուրթ DN76մմ ներդիրով	հատ	4.0	6.43	25.71
13	Փական 76մմ	հատ	4.0	26.83	107.33
14	Փական 50մմ	հատ	16.0	12.24	195.83
15	Փական 20մմ	հատ	2.0	4.41	8.82
16	Փական 15մմ	հատ	100.0	4.12	411.74
17	Համակարգի խցափակում 50մմ	հատ	16.0	2.15	34.47

18	Համակարգի լվացում, վարակազերծում և փորձարկում	գծմ	338.0	0.33	112.91
19	Միացում գործող ջրագծին	տեղ	4.0	6.42	25.68
20	Լվացարանի ծորակի տեղադրում	հատ	1.0	15.47	15.47
21	Ցնցուղարանի /լատունե, քրոմապատ, p=0.6mpa t=90c/ խառնիչ ծորակ՝ կոշտ կանգնակով և ցնցուղով: Իտալական կամ համարժեք:	հատ	50.0	88.01	4400.26
	կոյուղու ցանց				
	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Ա/բետոնե շերտի քանդում	$մ^3$	1.0	4.07	3.91
2	Խրամուղու մշակում V կարգի գրունտ. ձեռքով	$մ^3$	12.0	11.97	143.69
3	Ավազի շերտ նախապատրաստական 0.1մ	$մ^3$	1.2	4.25	5.10
4	Ավազի պաշտպանիչ շերտ 0.1մ	$մ^3$	0.5	4.25	2.13
5	Գրունտի ետլիցք ձեռքով	$մ^3$	10.0	1.28	12.84
6	Խճի շերտ ծածկույթի տակ 17սմ	$մ^2$	12.0	1.81	21.68
7	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Φ150 /արտաքին ցանց/	գծմ	10.0	1.07	10.71
8	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Φ110	գծմ	20.0	0.76	15.10
9	Կոյուղու թուջե խողովակների ապամոնտաժում Φ50	գծմ	5.0	0.76	3.78
10	Լվացարանի ապամոնտաժում	հատ	1.0	0.48	0.48
11	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ150	գծմ	105.0	0.57	59.69
12	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ100	գծմ	25.0	0.57	14.21
13	Անջատում գործող կոյուղագծից	տեղ	5.0	1.16	5.82
14	Հոսակի ապամոնտաժում	հատ	11.0	1.16	12.81
15	Շինաղբի բարձում և տեղափոխում 13 կմ հեռ.վրա	տ	5.0	3.19	15.95
	Մոնտաժման աշխատանքներ				
1	Պոլիվինիլքլորիդե խողովակների de200*3.5 մոնտաժում /արտաքին ցանց/	գծմ	10.0	3.55	35.49
2	Պոլիվինիլ քլորիդե խողովակների մոնտաժում de200x3.5	գծմ	65.0	3.66	237.81
3	Պոլիվինիլ քլորիդե խողովակների մոնտաժում de160x3	գծմ	50.0	2.45	122.53
4	Պոլիվինիլ քլորիդե խողովակների մոնտաժում de110	գծմ	4.0	1.60	6.42

5	Պոլիվինիլ քլորիդե խողովակների մոնտաժում de50x3.2	գծմ	2.0	1.14	2.28
6	Ձևավոր մասերի մոնտաժում	հատ	63.0	1.38	87.19
7	Եռաբաշխիչ PBX 50x50	հատ	1.0	0.28	0.28
8	Եռաբաշխիչ PBX 50x110	հատ	1.0	0.57	0.57
9	Եռաբաշխիչ PBX 160x110	հատ	1.0	3.20	3.20
10	Եռաբաշխիչ PBX 200x160	հատ	1.0	9.09	9.09
11	Ծունկ 50	հատ	1.0	0.15	0.15
12	Ծունկ 100	հատ	4.0	0.47	1.90
13	Ծունկ 150	հատ	36.0	1.90	68.27
14	Անկյուն 150	հատ	8.0	1.90	15.17
15	Անկյուն 200	հատ	10.0	4.53	45.34
16	Ստուգիչ d=100մմ	հատ	4.0	5.49	21.98
17	Ստուգիչ d=200մմ	հատ	2.0	7.47	14.94
18	Խողովակների ջերմամեկուսացում հանքային բամբակով /փայլաթիթեղով/	$մ^2$	40.0	1.77	70.86
19	Հոսակի մոնտաժում սիֆոնով d=100մմ	հատ	1.0	8.89	8.89
20	Հոսակի մոնտաժում սիֆոնով d=200մմ	հատ	22.0	14.17	311.68
21	Տակդիր սիֆոնով	կ-տ	1.0	28.70	28.70
22	Լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	2.0	18.88	37.76
23	Միացում գործող կոյուղագծին	տեղ	3.0	13.03	39.09
24	Անցքերի բացում և շաղափում պատերում Φ400	հատ	2.0	2.69	5.38
25	Անցքերի բացում և շաղափում ծածկի սալերում Φ100-300	հատ	52.0	3.73	194.11
26	Համակարգի լվացում, վարակազերծում և փորձարկում	գծմ	131.0	0.28	36.93
	հորերի շինաբարական աշխատանքներ				
1	Հավաքովի ե/բետոնե էլեմենտներից կոյուղու հորի մոնտաժում Φ1000	$մ^3$	1.2	45.48	54.58
2	Ե/բետոնե տակդիր Φ1200 h=150մմ	հատ	1.0	26.38	26.38
3	ե/բետոնե օղակ D=1000 h=1000	հատ	1.0	38.46	38.46
4	Ե/բետոնե ծածկ թուջե մտոցով 700*700 Φ1200 h=200մմ	հատ	1.0	114.73	114.73
5	Մետաղական աստիճան	հատ	1.0	19.78	19.78

Օդափոխություն

	Ապամոնտաժման աշխատանքներ				
1	Ուղղանկյուն օդատարի ապամոնտաժում /ցինկապատ թիթեղ 200x200/	$մ^2$	54.4	0.91	49.71
	Մոնտաժման աշխատանքներ				
1	Ուղղանկյուն օդատարի մոնտաժում ցինկապատ թիթեղով 0.6մմ մինչև 1000մմ	$մ^2$	43.0	6.15	264.46
2	Ուղղանկյուն օդատարի մոնտաժում ցինկապատ թիթեղով 0.7մմ մեծ 1000մմ	$մ^2$	176.0	6.59	1160.07
3	Օդատարի մեկուսացում ֆոլգայապատ հանքային բամբակով	$մ^2$	285.0	2.77	790.27
5	Անցքերի բացում և շաղափում պատերում 450x300	հատ	1.0	2.69	2.69
6	Անցքերի բացում և շաղափում պատերում 600x400	հատ	1.0	2.69	2.69
7	Անցքերի բացում և շաղափում ծածկի սալերում 450x300	հատ	4.0	3.73	14.93
8	Անցքերի բացում և շաղափում ծածկի սալերում 1000x400	հատ	3.0	3.73	11.20
3	Անցքերի փակում բետոնով	$մ^3$	0.2	32.87	6.57
9	Ներածող արտածող շարժական կարգավորող ճաղաշար 700*100	հատ	20.0	12.33	246.64
10	Ներածող արտածող շարժական կարգավորող ճաղաշար 300*100	հատ	10.0	8.38	83.75
	Ընդամենը				32240.25
	Շահույթ 11%				3546.43
	Ընդամենը				35786.68
	ԱԱՀ 20%				7157.34
	Ընդամենը				42944.01

1. Իրականացվող աշխատանքներում օգտագործվող շինարարական կոնստրուկցիաները և նյութերը պետք է ունենան առնվազն 10 տարվա երաշխիքային ժամկետ:
2. Շինարարական նյութերը ձեռք է բերելու կատարողը, համաձայնեցնելով պատվիրատուի հետ:
3. Աշխատանքները կատարել համաձայն նախագծի՝ կազմված «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ կողմից:

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ արտադրական տարածք հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ
Մ. Կարդանյան	Վ. Սարգսյան

«12» «03» 2019թ. Հավելված թիվ 2
կնքված
«ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-1/19» ծածկագրով
N 02/01 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ՀԱԷԿ» ՓԲԸ ՍԱՆԻՏԱՐԱ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ I ԵՎ II ՀԱՐԿԵՐԻ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«ՀԱԷԿ» ՓԲԸ սանիտարա-կենցաղային մասնաշենքի I և II հարկերի ցնցուղարանների վերանորոգում	Անցագրերը ստանալու օրվանից	30-ը սեպտեմբերի, 2019թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Մ. Վարդանյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ

Ա. Սարգսյան

Հավելված N 3
«12» «03» 2019թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-1/19» ծածկագրով
N 02/01 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451800	«ՀԱԷԿ» ՓԲԸ սանիտարա-կենցաղային մասնաշենքի I և II հարկերի ցնցուղարանների վերանորոգում										26898000			26898000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:
** Հիրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ
Վճարումը կկատարվի փաստացի կատարված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Մ. Վարդանյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ

Ա. Սարգսյան

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 **օրինակից,** յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն